



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՐԻՄԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ՄԱՅԻՍ 28Ի ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ
 ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ**

Կիրակի, 27 Մայիսը մեր եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն Հոգեգալուստի տօնն է, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան 89րդ տարեդարձին նախօրեակը:

Այս առիթով, մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ Հանրապետական Մաղթանք պիտի կատարուի, իսկ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ հայկական Եռագոյն Դրօշի օրհնութիւնը տեղի պիտի ունենայ նախագահութեամբ եւ ձեռամբ Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի:

Պատարագի ընթացքին, Առաջնորդ Սրբազանը պիտի փոխանցէ Հոգեգալուստեան եւ Հայաստանի Ա. Հանրապետութեան զոյգ տօներուն առթիւ իր պատգամը:

**PRAYER ON THE ANNIVERSARY
 OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA**

Sunday, May 27, is the Feast of Pentecost as well as the eve of the 89th anniversary of the first Republic of Armenia. On this occasion, special prayers for the Republic will be offered in all Prelacy churches. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Holy Mass at St. Mary's Church in Glendale. The Prelate will also bless the Armenian flag and deliver his message on Pentecost and the anniversary of Armenia's independence.

**CASPS-Ը ՅԱՏՈՒԿ ՀԱՆԻՍՈՒԹԵԱՄԲ ԿԸ ԳՆԱՀԱՏԷ
 ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՅԱԶՈՂԱԿ ՇՐՋԱՆԱԲԱՐՏՆԵՐԸ**

Ազգային Առաջնորդարանի հովանիին գործող CASPS յանձնախումբը, իւրաքանչիւր ուսումնական տարուան աւարտին, յատուկ հանդիսութիւններով կը պատուէ պետական վարժարաններէ շրջանաւարտ եղող յաջողակ աշակերտները:

Յառաջիկայ երկու շաբաթներուն, CASPSը կազմակերպած է երկու հանդիսութիւն. առաջինը նուիրուած է Կլենտէյլի հանրային վարժարաններէ շրջանաւարտ աշակերտներուն եւ տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, 29 Մայիսի յետմիջօրէի ժամը 5:30ին, Կլենտէյլի Pacific Community Centerին

մէջ: Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ այս հանդիսութեան ու շրջանաւարտներուն պիտի ուղղէ իր բարեմաղթութեանց ու օրհնութեան խօսքը:

Երկրորդ հանդիսութիւնը նախատեսուած է Զորեքշաբթի, 6 Յունիսին, եւ նուիրուած է Լոս Անճելըսի հանրային վարժարաններու համակարգի երկրորդ տեղամասի շրջանաւարտներուն: Այս հանդիսութիւնը առաջին անգամ ըլլալով է որ կը կազմակերպուի այս տեղամասի աշակերտներուն համար եւ տեղի պիտի ունենայ Los Angeles Valley Collegeի հանդիսասրահին մէջ:

PRELATE TO ATTEND CEREMONIES HONORING ARMENIAN GRADUATES

In the coming two weeks, the Committee for Armenian Students in Public Schools (CASPS) has organized two events in honor of Armenian graduates. The first is the 11th annual reception honoring Armenian graduates from Glendale Unified School District which will take place on Tuesday, May 29, at 5:30 p.m. at Pacific Community Center in Glendale. The Prelate will attend the ceremony where he will convey his blessings to the students. The second is the first annual reception honoring Armenian students from the Los Angeles Unified School District which is scheduled to take place on Wednesday, June 6, at 5:30 p.m. at Los Angeles Valley College.

ԹԵՄԻՍ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ ԽՐԱԽՃԱՆՔԸ

Շաբաթ, Յունիս 9-ին, երեկոյեան ժամը 8-ին, տեղի պիտի ունենայ Թեմիս Կիրակնօրեայ դպրոցներու առաջին տարեկան ճաշկերոյթ խրախճանքը: Ձեռնարկը նախաձեռնութիւնն է Կիրակնօրեայ դպրոցներու վարիչ մարմնին, կազմակերպուած է Կիրակնօրեայ դպրոցներու ծնողա-օժանդակ յանձնախումբին կողմէ եւ կը վայելէ Առաջնորդ Սրբազան Զօր հովանաւորութիւնը:

Ճաշկերոյթը տեղի պիտի ունենայ Ս. Նահատակաց եկեղեցւոյ «Աւետիսեան» սրահին մէջ: Երեկոն պիտի խանդավառէ ժողովրդական երգերու անզուգական մեկնաբան եւ սիրուած երգիչ՝ Ատիս Զարմանտեան:

Մանրամասնութեանց համար հեռաձայնել եկեղեցիներու գրասենեակները:

FIRST ANNUAL BANQUET OF PRELACY SUNDAY SCHOOLS

The first annual banquet of Prelacy Sunday Schools is scheduled to take place on the evening of Saturday, June 9, at “Avedissian” Hall in Encino. The banquet, which is being held under the auspices of the Prelate, was initiated by the Sunday Schools’ Directorate and is being organized by the Sunday Schools

Parents' Support Committee. Entertainment will be provided by Adiss Harmandian. For more details please contact your local church.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԿԼԵՆՏԵՅՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԱ ՆԱՃԱՐԵԱՆԸ

Ուրբաթ, 18 Մայիսի կեսօրին, Թեմիս Ազգային Երեսփոխանական Ժողովի 35րդ նստաշրջանին, Ազգային Առաջնորդարան այցելեց Կլենտեյլի նորընտիր քաղաքապետ Արա Նաճարեան եւ ընդունուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի կողմէ: Զանդիպումին ներկայ եղան նաեւ Ազգային Վարչութեան անդամներ:

Ազգ. Առաջնորդարանի նորակառոյց շէք քաղաքապետին անդրանիկ այցելութիւնը ըլլալով, Առաջնորդ Սրբազանն ու ժողովականները յարգելի հիւրին ընդհանուր գիծերու մէջ տեղեկութիւններ տուին հաստատութեան տարբեր բաժանմունքներուն, իրագործուած աշխատանքներուն ու յառաջիկայ ծրագիրներուն մասին:

Թեմիս Ազգային Երեսփոխանական Ժողովի 35րդ նստաշրջանին բացման պահուն Առաջնորդ Սրբազանն ու ժողովականութեան ներկայացուցիչները հիւր քաղաքապետը հրաւիրեցին «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահ, ուր հիւր քաղաքապետը շնորհաւորեց բոլորը՝ Ազգ. Առաջնորդարանի շէքի ծրագիրին ամբողջացման առիթով ու պատրաստակամութիւն յայտնեց իր կարելիութեան սահմաններուն մէջ նեցուկ կանգնելու Ազգային Առաջնորդարանին՝ որեւէ ձեւի ծառայութեամբ:



GLENDALE MAYOR ARA NAJARIAN VISITS THE PRELACY

On the afternoon of Friday, May 18, just before the opening of the Prelacy 35th National Representative Assembly, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and members of the Executive Council welcomed newly elected mayor of Glendale Ara Najarian to the Prelacy. Given that it was the mayor's first visit to the new building, the Prelate and council members acquainted him with the different departments that make up the Prelacy and conveyed to him the nature of past activities and future plans.

Mayor Najarian was then invited to the luncheon during the opening of the Representative Assembly at "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall where he offered his congratulatory remarks on the completion of the new headquarters and expressed his support of the Prelacy.

ԱՐԵՎՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԱԶԳ. ԵՐԵՍՓՈՒՆԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ԱՒԱՐՏԵՑ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Արեւմտեան մեր Թեմի Ազգային Երեսփոխանական ժողովը Ուրբաթ, 18 եւ Շաբաթ, 19 Մայիսին, Ազգային Առաջնորդարանի նորակառոյց շէնքի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ, նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, գումարեց իր ընթացիկ 35րդ նստաշրջանը: Ներկայ էին ժողովականութեան ներկայացուցիչները եւ Ազգ. Վարժարաններու պատասխանատուները:



Բացման արարողութենէն ետք, ժողովը լսեց Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի պատգամը, որ ցուցադրուեցաւ պաստառի վրայ:

Առաջնորդ Սրբազանին ու ժողովականութեան ներկայացուցիչներու ողջոյնի խօսքերէն ետք, ժողովը լսեց ծխական շրջաններու, ինչպէս նաեւ Ազգ. Առաջնորդարանի

տարբեր աշխատանքներուն մասին զեկուցումներ: Տարուած աշխատանքներուն ըստ եւութեան քննարկումէն ետք, ժողովը միաձայնութեամբ որդեգրեց բանաձեւի յանձնախումբին ներկայացուցած գնահատականը, որ «յոյժ գնահատելի» կը գտներ Առաջնորդ Սրբազանին, Կրօնական Ժողովին, Ազգային Վարչութեան եւ Քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի աշխատանքները:

Ըստ Ազգ. Երեսփոխանական Ժողովին առիթով վերջին տարիներու աւանդութեան, յատուկ գնահատանքի արժանացաւ բարեշնորհ ԲաժՖի Սրկ. Կարապետեան, մեր եկեղեցւոյ բազմամեայ իր ծառայութեանց ու մանաւանդ մեր շրջանի հայ բանտարկեալներուն իր մատուցած անձնդիր սպասարկութեան համար: Ան Առաջնորդ Սրբազանին ձեռամբ ստացաւ յուշանուէր մը:

Ազգային Վարժարաններու վերամշակուած կանոնագիրը յետ քննարկման վաւերացուեցաւ միաձայնութեամբ: Ապա մշակուեցաւ յառաջիկայ տարուան աշխատանքի ծրագիրները:

PRELACY 35TH NATIONAL REPRESENTATIVE ASSEMBLY CONCLUDES

On Friday, May 18, and Saturday, May 19, the 35th Prelacy National Representative Assembly took place at “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall, presided over by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and with the participation of Central Executive Council member Mr. Khajag Dikijian, Religious and Executive Council members, members of Boards of Trustees and

parish councils, Board of Regents, principals and directors of our Prelacy schools.

During the two-day Assembly, the annual reports of the Prelate and Religious and Executive Councils were presented to the delegates and the activities of the previous year were analyzed. Also on the agenda was the analysis and subsequent adoption of the revised Prelacy Schools' by-laws. The Assembly highly commended the work and efforts of the Prelate, Councils, Christian Education Department, Board of Regents, and previous Executive Councils.



Chaplain Raffi Garabedian was honored and was presented with a memento by the Prelate for his decades-long service and commitment to the Armenian Church and more specifically for the spiritual guidance he offers to Armenian inmates in our area.

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԶԵՌՆԱՐԿ

Ազգային Երեսփոխանական ժողովի աւարտէն ետք, Նոյն գիշերը, Ս. Նահատակաց եկեղեցւոյ կից «Աւետիսեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Ազգային Առաջնորդարանի տարեկան ձեռնարկը, նախագահութեամբ եւ ներկայութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր եւ հուրընկալութեամբ ազգային բարերար Տէր եւ Տիկին Սարգիս եւ Սիւզան Կիտցինեան ամուլին: Ներկայ էին ժողովականութեան անդամները եւ ազգային Առաջնորդարանի բարեկամներէն շուրջ 300 ազգայիններ: Ծաշկերոյթ-խրախճանքի բնոյթով այս ձեռնարկը կազմակերպուած էր Թեմիս Ազգային Վարչութեան կողմէ, որ որոշած է այսուհետեւ ամէն տարի, Ազգային Երեսփոխանական ժողովէն ետք կազմակերպել նման ձեռնարկ մը, ի մի խմբելով ծխական շրջաններու ներկայացուցիչները եւ ազգայիններ:

Ողջոյնի խօսքեր արտասանեցին Առաջնորդ Սրբազանն ու Ազգ. Վարչութեան ատենապետը: Գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր:

PRELACY EXECUTIVE COUNCIL FIRST ANNUAL BANQUET

Following the conclusion of the Representative Assembly, the annual banquet of the Prelacy took place under the auspices of the Prelate on the evening of Saturday, May 19, at "Avedissian" Hall in Encino. The banquet was organized by the Executive Council.

The event was hosted by Mr. and Mrs. Sarkis and Suzan Kitsinian. During the official program the Prelate and Executive Council Chair Dr. Garo Agopian delivered welcoming remarks, followed by an artistic program.